ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՄ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No. 24310111

13.04.2017

Նոր սպառողը կամ կառուցապատողը կամ սպառման համակարգը վերակառուցող սպառողը, ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ, այսուհետ՝ "Պատվիրատու", ի դեմս Աշխատակազմի ղեկ. Արտակ Սահակյանի, մի կողմից և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» «ԱՂՍՏԵՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ-ը, այսուհետ՝ "Մատակարար", ի դեմս տնօրեն Ն. ՂԱԼԹԱԽՉՅԱՆԻ, որը գործում է Ընկերության Գլխավոր տնօրենի Կ-193 առ 23.09.2015 հրամանով իրեն տրված լիազորությունների հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով "Կողմեր", կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարն իրականացնում է Պատվիրատուի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել իր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու համար:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Մատակարարը պարտավոր է

1) Պատվիրատուի դիմումի հիման վրա իրականացնել նրա սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին՝ ապահովելով նշված տեխնիկական հարաչափերով էլեկտրամատակարարումը և հաշվառումը:

էլ. սնուցումը հնարավոր է իրականացնել "Նոյեմբերյան" 110/35/6 կՎ ենթակայանի "Ճանշին" 6 կՎ օդային գծի թիվ 47 հենասյունից: Կառուցել L= 500 մ երկարության 6 կՎ օդային գիծ: Կառուցվող օդային գծի սկզբում տեղադրել 6 կՎ գծային բաժանիչ: Գոյություն ունեցող օդային գծի գույքահամարն է՝ 00605264: Սպառողի կողմից տեղադրել 100 կՎԱ հզորության ԼՏԵ: Հաշվառքային սարքերը տեղադրել ԼՏԵ-ի ցածր լարման կողմում: Անվտանգության գոտիների խախտում չկա: էլ. սնուցման տարածքը գտնվում է Լոռու մարզի Ճոճկան համայնքի վարչական սահմաններում՝ բնակավայրից դուրս:

2) Պատվիրատուի սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին ավարտել և ներկայացնել էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ___/___/____ (օրը, ամիսը, տարին):

2.2. Պատվիրատուն պարտավոր է

1) Իր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու համար վճարել միացման վճարը

միացման՝	848,333.33դրամ
ԱԱՀ՝	169,666.67դրամ
ընդամենը	1,018,000.00դրամ

սույն պայմանագրի 3-րդ գլխում սահմանված կարգով:

2) Մատակարարին գրավոր տեղեկացնել ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ միացման կամ միացման վճարի կատարման ժամկետների վրա:

3. Վճարման կարգը

3.1. Պատվիրատուն վճարում է իր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարի 50 տոկոսը՝ որպես կանխավճար, սույն պայմանարիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2. Միացման վճարի մնացած մասը պատվիրատուն վճարում է սույն պայմանագրի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ սույն պայմանագրով սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագրի 2.1 կետի 2-րդ ենթակետի խախտման դեպքում Մատակարարը Պատվիրատուին վճարում է տույժ, օրեկան սույն պայմանագրի 3.1. կետի համաձայն վճարված կանխավճարի 0.1%-ի չափով, բայց ոչ ավելի քան կանխավճարը:

4.3. Սույն պայմանագրի 3.1 կետի խախտման դեպքում Պատվիրատուն Մատակարարին վճարում է տույժ, որի չափը սահմանում են Կողմերը՝ սույն պայմանագրի 6-րդ գլխում:

5. Լրացուցիչ պայմաններ

5.1. Միացման վճարի հաշվարկը կցվում է սույն պայմանագրին: Միացման վճարի հաշվարկում Վլրաց. և Վպահուստ բաղադրիչների առկայության դեպքում, դրանց մեծությունները որոշվում են՝ հիմք ընդունելով աշխատանքների նախահաշվային արժեքը, որոնք աշխատանքների ավարտից հետո ճշգրտվում են՝ ելնելով փաստացի կատարված ծախսերից:

6. Այլ պայմաններ (լրացնում են Կողմերը)

6.1. Սույն պայմանագրի 3.1 կետի խախտման դեպքում Պատվիրատուն Մատակարարին վճարում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր բանկային օրվա համար պայմանագրի 2.2 կետի 1-ին ենթակետում նշված գումարի 0.1%-ի չափով:

6.2. Սույն պայմանագրի 2.1 կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետը երկարաձգվում է պատվիրատուի կողմից սույն պայմանգրի կնքման համար նախատեսված ժամկետի գերազանցած օրերի չափով:

6.3. Միացումն իրականացվում է 2.2 կետում նշված գումարն ամբողջությամբ վճարումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Մատակարարի կողմից միացման աշխատանքները սույն պայմանագրի 2.1.2 կետում նշված ժամկետից ավելի վաղ ավարտելու մասին Պատվիրատուին գրավոր ծանուցելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է վճարել միացման վճարը վերը նշված ծանուցումը և Մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշիվը ստանալուց _____5_____ օրվա ընթացքում:

6.4. Վճարման փաստաթղթերում պարտադիր պետք է նշել հետևյալ տվյալները.

Ստացողը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ԱՂՍՏԵՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ,

Ստացողի բանկային հաշիվը՝ հաշիվ No. 2474663158240410, «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ

Վճարողի անվանումը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Վճարման նպատակը՝ Միացման վճար համաձայն էլեկտրական ցանցին միացման No. 24310111

7. Վեճերի լուծումը

7.1. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջնորդությամբ:

7.2. Սույն պայմանագրի 7.1 կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

8. Պայմանագրի գործողության ժամկետը և փոփոխման կարգը

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:

8.2. Սույն պայմանագիրը կազմվում է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

8.3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

8.4. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Մատակարար՝		**Պատվիրատու՝**	
ՀՎՀՀ	01520882	ՀՎՀՀ	02647057
Հասցե	ք.ԻՋԵՎԱՆ, ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ 15	Հասցե	ՀՀ ԵՐԵՎԱՆ , ք.ԵՐԵՎԱՆ, ԽՈՐԵՆԱՑՈՒ փող., բն. թ.3
Հեռախոս	060711426	Հեռախոս	043080909
Հ/Հ	2474663158240410	Հ/Հ	900013574018
Բանկ	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ	Բանկ	ՀՀ ՖԻՆ.ՆԱԽ.ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
Տնօրեն	Ն. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ	Աշխատակազմի ղեկ.	Արտակ Սահակյան

(ստորագրություն, անուն, ազգանուն)

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. S.